Ահա յունարէնի թարգմանութիւնը՝ ի լուսաբանութիւն հայերէնին.

ԴԵՂԹԱՓ ԱՆՏՐՈՄԱՔԻ
(ΘΗΡΙΑΚΗ՝ ΑΝΔΡΟΜΑΧΟΥ)

ԵՐԷՑԻ, ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ԳԻՏՑ

Բաղադրուած, կշռուած և հրատարակուած ինծմէ՝ Յովհաննէս Մկրտիչ Սիլվեսթրինի, ի Ռիալթոյ, ի ներկայութեան արդարութեան պաշտօնէութեան և յարգելի բժիշկներու ժողովին և դեղավաճառներու և բժշկական արուեստին գիտուններու ժողովին։

Վերոյիշեալ դեղթափը (ἀντίδοτον) կը չինուի վենետկոյ մէջ ամէն խնամքով և հաւատարմութեամբ, Յ. Մ. Սիլվեսթրինի դեղավաճառէն TESTA D'ORO *(իտ. Testa d'Oro = Ոսկեգլուխ) Ս. Բարթողիմէոսի (եկեղեցւոյն) մօտ, ի ներկայութեան արդարութեան պաշտօնէութեան եւն. և ուրիշներու որ յատկապէս ընտրուած էին, որուն (դեղթափին) զօրութիւնը և սքանչելի յատկութիւնները յօգուտ մարդկութեան՝ հետեւեալներն են, իբրեւ օգուտ և շահ ամէնուն։*

Իր զանազան յատկութիւններէն զատ որ ունի այս դեղթափը, հետեւեալներն ալ կան.

Կը բուժէ ժանտախտը և մարդը առողջ և ուրախ կը պահէ։

Մարմինէն դուրս կը հանէ վնասակար հոյզերը, և կը բուժէ հոգւոյն բոլոր հիւանդութիւնները իր ցաւերով։

Կ'առողջացնէ և կը բուժէ խայթուածները իժերուն, կարիճներուն, շուներուն և ուրիշ կատաղած անասուններու, խմելով (զայն) կամ վէրքին վրայ դնելով։

Կը բուժէ բոլոր ներքին հիւանդութիւնները, ինչպէս հիւծախտն և նմանները։

Կը բուժէ բոլոր ջերմերը, և մասնաւորապէս հին և մահացու ջերմերը։

Դարձեալ շատ օգտակար է ստամոքսի ամէն տկարութեան համար, կը բուժէ ալիքներուն և երիկամունքներուն բոլոր հիւանդութիւնները։

Կը բուժէ չրգողութիւնը, և դեղին ցաւը։

Կուրծքէն կը հանէ փտած (արիւնը), և կը բուժէ արիւն թքնելը, եթէ մէկը ստէպ առնէ այս դեղը։

Կ'աճեցնէ աչքերու լոյսը և կատարելապէս կը բուժէ գլխու բոլոր ներքին հիւանդութիւնները, ինչպէս կաթուածը, քոսուկութիւնը, լուսնոտութիւնը, դողը։

Կը բուժէ կուրծքի ցաւերը, ինչպէս հազը, խուխը որ կը ձեւանայ աղի մաղասով։ Շատ կը զօրացնէ սիրտը և կը բուժէ անոր բաբախումները։

Կը բուժէ բորոտութիւնը՝ երբ շատ գործածուի։

Կը հանէ (կիներու) դաշտանը և թուխքը (մայասըլ)։

Կը բուժէ ցաւը լեարդի, փայծաղի և անոր բարդութիւնները։

Բացի այս ամէնէն զոր համառօտ կերպով ըսինք, կը թողունք իր միւս յատկութիւնները, որովհետեւ ամէնուն ծանօթ է իր անունը։

Օգտակար է մարդուս բոլոր հասակներուն, և բոլոր ժամանակներուն և բոլոր նկարագիրներուն։

Քանակն (dose) այս է. երիտասարդներուն և զօրաւորներուն՝ կը բաւէ կէս կրամ (δραμμα = տիրէմ՝ թրք.)։

Թունաւորուածներուն և ծերերուն համար՝ որովհետեւ աւտնք տկար են՝ մէկ կրամ։

Կրնայ խմուիլ՝ խառնուած գինիի կամ ջուրի հետ։
